Ա. ԷԼԶԻԲԵԿՅԱՆ

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1918 ԹՎԻ ՄԱՅԻՍԻՆ

Առանձնատիպ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1947 թ.
№ 8 «Տեղեկագրից»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1947

9(47.925)
Ե-29
57278

Եսայեան Հ.
Դարպիսի՞ սխալներ
տարան 1918 թվի տպիչներ։

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 8 Общественные науки

ՍՏԱՑՎԱԾ է 1961 թ.
9(47-25)21
Ա 33359

Հ. Էլչիբեկյան

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո Անդրկովկասի իշխող դասակարգերը և հակառևոլուցիոն պարտիաները—մենշևիկները, դաշնակները, մուսավաթականները և ուրիշ բուրժուա-նացիոնալիստական պարտիաներ շտապեցին անջատել Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից։ Հոկտեմբերյան ռևոլուցիայի հաղթանակը Անդրկովկասում ահ էր նշանակում երկրի իշխող դասակարգերի համար։ Ահա թե ինչու նրանք, լցված անասելի թշնամությամբ դեպի Ռուսաստանում հաղթանակած պրոլետարական ռևոլուցիան ու սարսափով, որ նա կհաղթանակի և Անդրկովկասում՝ զինված պայքարի ելան Սովետական Ռուսաստանի դեմ։ Անջատելով Անդրկովկասը և այդպիսով զրկելով նրա ժողովուրդներին Սովետական Ռուսաստանի օգնությունից, Անդրկովկասի իշխող դասակարգերը հեշտացնում էին երկրի նվաճումը գերմանա-թյուրքական իմպերիալիզմի կողմից։ Այդ անջատողական քաղաքականության հետևանքով, որը ամեն կերպ խրախուսվում էր գերմանա-թյուրքական զավթիչների կողմից, Անդրկովկասը 1918 թ. գարնան վերջերից ընկավ գերմանական և թյուրքական օկուպանտների ձեռքը։ Բաքվի պրոլետարիատն հաջողվեց, բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, 1918 թ. ապրիլին սովետական իշխանություն հաստատել Բաքվում և հերոսական պայքար ծավալել նրա հաստատման համար և ամբողջ Անդրկովկասում։ Բայց շնորհիվ էսէրների, դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների վարած դավաճանական քաղաքականության ինչպես Անդրկովկասում, այնպես և Բաքվում, քաղաքը նույն թվի օգոստոսին ընկավ անգլիական, իսկ սեպտեմբերին՝ գերմանա-թյուրքական օկուպանտների ձեռքը, որի հետևանքով Բաքվում ևս ժամանակավորապես հաղթանակեց հակառևոլուցիան։

Անդրկովկասի նույն իշխող դասակարգերը իրենց համար անընդունելի համարեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և անջատ հաշտության բանակցությունների մեջ մտան Թյուրքիայի հետ և վերջիվերջո ստիպված եղան 1918 թ. հունիսին Բաթումում Թյուրքիայի հետ հաշտություն կնքել շատ ավելի ծանր պայմաններով, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն էր։

Հաշտության բանակցությունները Թյուրքիայի և իրեն պարտված ճանաչած, այսպես կոչված անդրկովկասյան կառավարության միջև սկսեցին Բաթումում 1918 թ. մայիսի 11-ին։ Բանակցություններին մասնակցում էր և Գերմանիան, հանձին իր պատվիրակության՝ գեներալ Լոսովի գլխավորությամբ։ Պատվիրակության նպատակն էր, ինչպես այդ հայտարարել էր Լոսովը, պաշտպանել Գերմանիայի շահերը Անդրկովկասում։

Կոնֆերանսի հենց առաջին նիստում պարզվեց, որ Թյուրքիան առաջարկելու է հաշտության նոր, շատ ավելի ծանր պայմաններ, քան Բրեստ-

Լիտովսկի պայմանագրով նախատեսված էր Անդրկովկասի վերաբերյալ։ Բաթումում Թյուրքիան «սահմանների ուղղման» անվան տակ նոր տերիտորիաներ պահանջեց Թիֆլիսի և Երևանի նահանգներից։ Անդրկովկասի երկաթուղիները մինչև պատերազմի վերջը պիտի անցնեին Թյուրքական հրամանատարության տրամադրության տակ։ Թյուրքական կառավարությունն իր պատրաստակամությունն էր հայտնում զինված ուժերով օգնության գալու անդրկովկասյան կառավարությանը երկրի անդորրությունն ու անվտանգությունը պաշտպանելու գործում, այլ կերպ ասած, հանձն էր առնում օգնելու Անդրկովկասի իշխող դասակարգերին՝ ճնշելու ռևոլյուցիոն շարժումը երկրում։ Թյուրքիայի առաջարկած հաշտության այդ պայմանները փաստորեն Անդրկովկասը դարձնում էին նրա պրովինցիան։ Բանակցությունների հետևանքը եղավ այն, որ Անդրկովկասը գերմանա-Թյուրքական օկուպանտների թելադրանքով բաժանվեց երեք «անկախ» բուրժուա-նացիոնալիստական ռեսպուբլիկաների, որոնց հետ և Թյուրքիան առանձին-առանձին հաշտություն կնքեց։

Բանակցությունների ժամանակ Թյուրքական պատվիրակությունը իր կառավարության անունից անդրկովկասյան պատվիրակությունից պահանջեց, որ Թյուրքական հրամանատարությանը թույլատրվի իր զորքերը Պարսկաստան (այժմ Իրան) փոխադրել Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական)—Ջուլֆա երկաթուղով։ Իր այդ պահանջը Թյուրքական պատվիրակությունը պատճառաբանում էր անգլիացիների դեմ Պարսկաստանում և Միջագետքում ռազմական գործողությունների զարգացման «հրամայական» պահանջով։ Թյուրքերը, իրենց հայտարարության համաձայն, ցանկանում էին կանխել անգլիական ուժերի առաջխաղացումը Հարավային Պարսկաստանից դեպի Անդրկովկասի սահմանները և օգնել իրենց վեցերորդ բանակին, որը Միջագետքում կռվում էր անգլիացիների դեմ։

Թյուրքական այդ պլանի մասին գիտեին Բաթումում գտնվող անդրկովկասյան պատվիրակությունը և նրա հայ անդամները՝ դաշնակցականներ Հ. Քաջազնունին, Ա. Խատիսյանը և հայ ժողովրդական պարտիայի անդամ Մ. Պապաջանյանը։ Թյուրքերը այդ մասին խոսել էին թե անդրկովկասյան պատվիրակության և թե նրա հայ անդամների հետ։ Վերջիններիս հետ այդ հարցի շուրջը հատուկ զրույց էին ունեցել Թյուրքական պատվիրակության նախագահ Խալիլ-բեյը և Կովկասյան ռազմաճակատի Թյուրքական զորքերի հրամանատար Վեհիբ-փաշան։ Տեսակցությունը անդրկովկասյան պատվիրակության հայ անդամների հետ տեղի էր ունեցել մայիսի 13-ին, գերմանական գեներալ Լոսովի խորհրդով։ Հանդիպման ժամանակ Խալիլ-բեյը և Վեհիբ-փաշան բարձրացրել էին Թյուրքական զորքերը Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթգծով դեպի Պարսկաստան փոխադրելու հարցը։ Այդ առթիվ կարդում ենք անդրկովկասյան պատվիրակության հայ անդամների նյութերում. «...Ներկա մոմենտում կա մի հարց, որը անհապաղորեն լուծում է պահանջում։ Դա հետևյալն է. ելնելով ռազմական բնույթի նկատառումներից, Թյուրքերին անհրաժեշտ է փոխադրել իրենց զորքերը և որքան կարելի է շուտ գրավել Թավրիզը, իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի մենք հնարավորություն տանք նրանց օգտագործելու մեր երկաթուղին։ Այդ գործը խիստ շտապ է և պիտի լուծվի ան-

միջապես»[1]։ Այնուհետև Խալիլ-բեյը նույնիսկ հայտնում է փոխադրվելիք զորքերի քանակը։ Ըստ նրա հայտարարության՝ «Պիտի ուղարկվի մի կորպուս—$^2/_3$-ը Դարսի վրայով, իսկ $^1/_3$-ը՝ Թիֆլիսի»[2]։ Խալիլ-բեյից հետո նույն հարցի մասին ավելի մանրամասն խոսում է Վեհիբ-փաշան. «...Նա ասաց հետևյալը,—գրում են անդրկովկասյան պատվիրակության հայ անդամները,—անգլիացիք շարժվում են Մոսուլի կողմը և դեպի Հյուսիսային Պարսկաստան։ Թյուրքերին անհրաժեշտ է կանխել այդ շարժումը և անհետաձգելիորեն գրավել Թավրիզը։ Նա՝ Վեհիբ-փաշան, էնվեր-փաշայից հրաման ունի այդ գործողությունը կատարել որքան կարելի է արագ և ինչ գնով որ ուզում է լինի։ Բոլորից կարճ և միակ հնարավոր ճանապարհը այդ իրագործելու համար—դա՝ Ալեքսանդրապոլ—Ջուլֆա—Թավրիզ երկաթգիծն է։ Եվ նրանք խնդրում են մեզ չմերժել տրամադրելու իրենց այդ գիծը»[3] Այնուհետև Վեհիբ-փաշան վստահացրել էր պատվիրակության հայ անդամներին, որ նա ձեռք կառնի բոլոր միջոցները, որպեսզի բնակչությունը չտուժի այդ ռազմական գործողությունից, որ նա ցանկություն չունի գրավել Երևանի նահանգը և եթե նման մտադրություն ունենար, ապա նա կիրագործեր այդ բացահայտորեն, որովհետև չի վախենում հայերի դիմադրությունից։ Թյուրք հրամանատարը ընդսմին դիմում է և սպառնալիքի։ Անդրկովկասյան պատվիրակության հայ անդամները գրում են, թե Վեհիբ-փաշան հայտարարեց, որ եթե հայերը փորձեն դիմադրել, ապա «նա ռազմական երթով կանցնի (նույնիսկ ասաց «գորահանդեսի երթով»), այնքան նա քիչ է հավատում մեր ընդունակությանը՝ դիմադրելու, բայց վախենում է, որ զորքերի նման շարժման ժամանակ քաղաքների և գյուղերի վրայով, նա չկարողանա պահել կարգ-կանոնը և երկրի ընակչության դեմին լուրջ աղետներ գան»[3]։ Ուրիշ խոսքով՝ թյուրք հրամանատարը ակնարկում էր, որ հնարավոր է հայերի կոտորածը, եթե նրանք փորձեն դիմադրել։

Անդրկովկասյան պատվիրակությունը, այդ թվում և նրա հայ անդամները, դեմ չէին Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթգծով թյուրքական զորքերի փոխադրման, բայց նրանք ցանկանում էին, որ իրենց համաձայնությունն այդ հարցում փոխհատուցվի թյուրքիայի կողմից տերիտորիալ զիջումով։ Ինչպես արդեն ասացինք, թյուրքերը Բաթումում պահանջեցին նոր տերիտորիաներ, որոնք չէին նախատեսված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, Այժմ անդրկովկասյան պատվիրակությունը փորձեց թյուրքերի պահանջը կատարումը պայմանավորել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հշգբիտ կիրառմամբ։ Պատվիրակության հայ անդամները թյուրքերի հետ իրենց տեսակցության հետևանքների մասին գրում են իրենց նյութերում. «Մենք հեռացանք դիշերվա ժամը «2$^1/_2$»-ին այն կարծիքով, որ մենք կարող ենք զորքերի փոխադրման թույլտվություն տալ միայն այն պայմանով, որ նրանք (թյուրքերը։ Հ. Ի.) ետ կվերցնեն իրենց տերիտորիալ պահանջնե-

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական Արխիվ, ֆոնդ 68/200, գործ № 11, թ. 10—11։

[2] Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական Արխիվ, ֆոնդ 68/200, գործ № 23, թ. 111։

[3] Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական Արխիվ, ֆոնդ 68/200, գործ № 11, թ. 10—11։

բը»[1]։ Վերջնական պատասխան չտալով Թյուրքերին, թե անդրկովկասյան պատվիրակությունը և թե նրա հայ անդամները հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկյանին ժամանակին չեն հայտնում սպառնացող վտանգի մասին։

Ստանալով որոշակի պատասխան իրենց հարուցած խնդրի վերաբերյալ, Թյուրքիայի ներկայացուցիչները մայիսի 14-ին նույն հարցի շուրջը պաշտոնական նոտայով դիմում են անդրկովկասյան պատվիրակությանը։ Նոտան իրենից ներկայացնում էր Վեհիբ-փաշայի կողմից Խալիլ-բեյին ուղղված նամակը, որի բովանդակության հետ Խալիլ-բեյը անհրաժեշտ էր համարել ծանոթացնելու անդրկովկասյան պատվիրակությանը։ Թյուրքական հրամանատարը կրկնում էր այն, ինչ որ արդեն ասել էր անդրկովկասյան պատվիրակության հայ անդամներին։ Նորություն էր միայն նրա հայտարարությունն այս մասին, որ Թյուրքական զորքերի առաջխաղացումը սկսվելու է մայիսի 15-ի վաղ առավոտից։ «Այժմ ես խնդրում եմ ձերդ գերազանցության,—գրում էր նա,—անմիջապես տեղեկացնել անդրկովկասյան պատվիրակության, խուսափելու համար այն բանից, որ նա ճիշտ տեղյակ չի պահվել, որ զորքերի շարժումը կսկսվի վաղը, կանուխ առավոտյան»[2]։ Նոտան ուղարկվում է գիշերվա ժամը 1½-ին և անդրկովկասյան պատվիրակությանն է հասնում մայիսի 15-ի առավոտյան ժամը 5-ին, այսինքն՝ Ալեքսանդրապոլի վրա Թյուրքերի հարձակումից երկու ժամ առաջ։ Անդրկովկասյան պատվիրակությունը բողոքում է Թյուրքերի կողմից սկսված հարձակման դեմ, բայց նրա բողոքները անհետևանք են մնում։ Պատվիրակության հայ անդամները լինում են Լոսովի մոտ և հայտնում Թյուրքերի նոտայի մասին։ Այդ այցելության մասին մենք կարդում ենք վերը հիշված նյութերում։ «Առավոտվա ժամը 5-ին Խալիլ-բեյից և Վեհիբ-փաշայից հաղորդում ստացանք, որ Թյուրքիայի զորքերը մայիսի 15-ի առավոտվանից պիտի սկսեն տրանզիտային անցումը Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթգծով դեպի Պարսկաստան։ Դա միանգամայն անսպասելի էր. ժամը 8-ին ես (Ա. Խատիսյանը։ Հ. Ե.) այդ առթիվ գնացի Լոսովի մոտ։ Լոսովը շատ զարմացած էր և խիստ բարկանում էր Թյուրքերի վրա, որ նրանք չլսեցին իրեն և արեցին այն քայլը։ Համենայն դեպս նա խորհուրդ էր տալիս չսկսել թշնամական գործողություններ, բայց թողնել նրանց և գրել խիստ բողոք։ Նա ասաց, որ ինքը ևս բողոքելու է... Ես ասացի, որ անհրաժեշտ է, որպեսզի Թյուրքական զորքերի հետ շարժվեն և գերմանական սպաները, հակառակ դեպքում հնարավոր են (այստեղ բնագրում մի բառ բաց է թողնված։ Ենթադրում ենք, որ պիտի լինի էքսցեսներ։ Հ. Ե.) Լոսովը դրա հետ համաձայնվեց և Թիֆլիսի վրայով Ալեքսանդրապոլ ուղարկեց երկու գերմանական սպա։ Միևնույն ժամանակ նա միանգամայն վճռական կերպով հայտարարեց, որ գերմանական կառավարությունը չեզոքության նման խախտման չի համակրում»[3]։

Դիտելի արդյոք Գերմանիան Թյուրքական հրամանատարության այդ

---

[1] Հայկական ՍՍՌ Գեռ. Կենտրոնական Արխիվ, ֆոնդ 68/200, գործ № 23, թ. 111։

[2] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919 г., стр. 270.

[3] Հայկական ՍՍՌ Գեռական Կենտրոնական Արխիվ, ֆոնդ 68/200, գործ № 23, թերթ 111—112։

պլանի մասին։ Մեր ձեռքի տակ եղած նյութերի հիման վրա կարելի է ենթադրել, որ գիտակը ճիշտ է, գեներալ Լոսովը անդրկովկասյան պատվիրատարության հայ անդամների հետ զրուցելիս հայտարարել էր, որ գերմանական կառավարությունը Թյուրքերի այդ քայլին չի համակրում, բայց նույն Լոսովը խուսափում է այդ ասածը հրապարակորեն հայտարարելու իր պաշտոնական պատասխանում անդրկովկասյան պատվիրակությանը՝ վերջինիս կողմից գերմանական պատվիրակությանը հայտնած բողոքի առթիվ։ Պատասխանում Լոսովը գրում էր. «...ես հեռագրով հայտնեցի կայսերական կառավարության, ինչպես և Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի կառավարություններին ձեր բողոքը Թյուրքական զորքերի՝ անդրկովկասյան ռեսպուբլիկայի տերիտորիան մտնելու դեմ։ Դրա հետ միասին ես նոտայով դիմեցի օտոմանյան պատվիրակության պետին, որտեղ ես հայտնում եմ իմ կարծիքը Թյուրքական կառավարության գործողությունների նկատմամբ»[1]։ Դուցե այդ գուսպ, ըստ էության բողոքը մերժող պատասխանը բացատրվում է նրանով, որ Լոսովը չէր ուզում բանակցություններին ընթացքում բաթումում հրապարակորեն քննադատել Գերմանիայի դաշնակցի՝ Թյուրքիայի գործողությունները։ Բայց մենք ունենք երկու վկայություններ Լոսովից ոչ պակաս հեղինակավոր անձանց, որոնք հաստատում են մեր ենթադրությունը։ Դրանցից մեկը պատկանում է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի ցամաքային զինված ուժերի հրամանատար Հինդենբուրգին, իսկ մյուսը՝ Թյուրքիայում գերմանական դեսպան Բերնսդորֆին։ Առաջինը իր հիշողություններում խոսելով 1917 թ. վերջերից դեպի Անդրկովկաս սկսված Թյուրքական արշավի մասին և այն մասին, թե ինչպես այդ արշավի հեռանկարը հարբեցրել էր Թյուրքական գեներալներին, գրում է. «Հեռու դեպի Արևելք տարավ Թյուրքիային նաև Անդրկովկասի վրայով Պարսկաստանի վրա ազդեցություն գործելու մտադրությունը։ Պարսկաստանի վրայով մտադրվում են (Թյուրքական գեներալները։ Հ. Ի.) թիկունքից հարվածել Միջագետքում տարվող անգլիական գործողություններին»[2]։ Այնուհետև Հինդենբուրգը հավանություն է տալիս Թյուրքական այդ պլանին և նկատում է. «...Օտոմանյան պլանների կիրառումը Պարսկաստանում և Անդրկովկասում մտնում է մեր շահերի մեջ»[3]։ Պոլսի գերմանական դեսպան Բերնսդորֆը դաշնակցական կառավարության՝ Պոլսում գտնվող պատվիրակության[4] հետ հանդիպման ժամանակ, 1918 թ. հունիսի 23-ին, խոսելով Թյուրքերի ռազմական գործողությունների մասին Անդրկովկասում, հայտարարեց. «Գերմանիան պահանջում էր առանց հետաձգելու թույլ տալ զորքերի փոխադրումը երկաթուղով դեպի Պարսկաստան, բայց Վեհիբ-փաշան հավատացնում էր, որ հայերը առանց

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆոնդ 56/120, գործ № 4, թ. 8—9։

[2] Воспоминания Гинденбурга. Пер. с нем., Петроград, 1922, стр. 104.

[3] Նույն տեղում։

[4] 1918 թ. ամառը Պոլսում կոնֆերանս պիտի կայանար գերմանական կոալիցիայի մեջ մտնող պետություններն և անդրկովկասյան նորաստեղծ բուրժուա-նացիոնալիստական «անկախ» ռեսպուբլիկաների մասնակցությամբ։ Կոնֆերանսը քննելու էր Անդրկովկասին վերաբերող մի շարք հարցեր։ Այդ առթիվ Պոլիս էին հավաքվել անդրկովկասյան հիշյալ ռեսպուբլիկաների պատվիրակությունները, որոնց թվում և դաշնակցական կառավարության պատվիրակությունը։ Կոնֆերանսը չհայտարարվեց։ Հ. Ի.

կռվի չեն գիջի այդ...»[1]։ Խոսելով թյուրքական այդ պլանի մասին, ընկեր Ստալինը իր «Կովկասի դրության առթիվ» հոդվածում թյուրքական բանակի այդ շարժումը դիտում է որպես «...բոլոր իրավունքները խախտող թյուրքական արշավանք, որը հետապնդում է պարսկական երկաթուղային գծի գրավումը»[2]։ Այդ շարժումը ընկեր Ստալինը վատնդ է համարում Հարավային Անդրկովկասի համար։ Այդ մասին նույն հոդվածում նա գրում է. «Ինչ վերաբերում է դրությանը Հարավային Անդրկովկասում, այնտեղ, իրոք, վտանգ կա, բայց ոչ անգլիացիների կողմից, այլ թյուրքերի կողմից, որոնք Ալեքսանդրապոլ—Ջուլֆա գծով անցնում են դեպի Թավրիզ՝ «Հյուսիսային Պարսկաստանում անգլիացիներին դիմադրություն ցույց տալու համար»[3]։

Մայիսի 15-ին, վաղ առավոտյան, Ալեքսանդրապոլի դեմ կանգնած թյուրքական զորքերի հրամանատար Շեֆքեթ-փաշան անցավ հարձակման և ոմբակոծումից հետո գրավեց քաղաքը։ Կազմալուծված հայկական ազգային զորամասերը թույլ դիմադրություն ցույց տվին։ Մայիսի 16-ին թյուրքական հրամանատարությունը վերջնագիր ներկայացրեց հայկական ազգային զորամասերի հրամանատար գեներալ Նազարբեկյանին, պահանջելով, որ թույլատրվի թյուրքական զորքերի փոխադրումը դեպի Ջուլֆա։ Մեկ ժամվա ընթացքում գեներալ Նազարբեկյանը պիտի հայտներ իր պատասխանը։ «Եթե դուք կապահովեք երկաթգծով փոխադրման կանոնավորությունը և ապահովությունը,—ասված էր վերջնագրում,—ապա համոզված եղեք, որ փոխադրումը մեր կողմից կլինի միանգամայն լոյալ, իսկ ձեր կողմից անբարյացակամ վերաբերմունքի դեպքում մենք ստիպված կլինենք շարժվել հետիոտն և չենք ապահովում ընակիչների լիակատար խաղաղությունը շարժվող զորքերի կողմից»[4]։ Այդպիսով, վերջնագրում ասված էր այն, ինչ որ արդեն ասել էին թյուրքերը Բաթումում, ընդհուպ մինչև հայերին կոտորելը թյուրքական առաջարկը չընդունելու դեպքում։ Գեներալ Նազարբեկյանը համաձայնում է թյուրքական հրամանատարության առաջարկին, բայց պահանջում է, որ թյուրքերը դադարեցնեն առաջխաղացումը, մինչև որ թյուրքական զորքերի երկաթգծով փոխադրելու հարցը կլուծվի Բաթումում։ Բաթումում գտնվող անդրկովկասյան պատվիրակությունը իր հերթին միջոցների է դիմում լուծելու այդ խնդիրը, կրկին փորձելով կապել իր համաձայնությունը թյուրքերի կողմից զիջման հետ՝ տերիտորիալ հարցերում։ Անդրկովկասյան պատվիրակությունը ցանկանում էր, որ թյուրքիան չխախտի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված սահմանները։ Սակայն թյուրքերն արդեն դիմել էին զենքի, սկսել էին հետիոտն առաջ խաղալ, ոչ մի զիջման մասին չէին ուզում լսել և ենթադրում էին, որ նույնքան հեշտությամբ առաջ կգնան, ինչպես որ 1917 թ. վերջերից սկսած երդնակայից հասել էին Ալեքսանդրապոլ։ Բայց այդպես չեղավ։ Այն հանդիսավոր երթը, որով Վեհիբ-փաշան պարծենում էր անցնել դեպի Ջուլֆա, տեղի չունեցավ։ Ինչ վերաբերում է թյուրքական պլանին՝ Պարս-

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական Արխիվ, ֆոնդ 68/200, գործ № 13, թ. 3։
[2] И. В. Сталин, Сочинения, том 4, Москва, 1947, стр. 103.
[3] И. В. Сталин, Сочинения, том 4, стр. 102.
[4] Документы и материалы... стр. 287.

կաստանից հարվածել Միջագետքում գտնվող անգլիացիներին՝ չիրականացավ։ Ինչու է, Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթգիծն անցավ նրանց ձեռքը, վերցրին և Թավրիզը, բայց թյուրքերը Ուրմիո լճի հարավային կողմից ավելի հեռու գնալ չկարողացան և խանգարել անգլիացիների գործողություններին Հարավային Պարսկաստանում և Միջագետքում նրանք ի վիճակի չեղան։ Բավական է հիշել, որ անգլիական իմպերիալիստները կարողացան 1918 թ. ամառը Հարավային Պարսկաստանից հասնել Կասպից ծովի ափերը և Էնզելիից զորք հանել Բաքու։

Դրավելով Ալեքսանդրապոլը և հենակետ դարձնելով այն, թյուրքերը մի կողմից շարժվեցին դեպի Ղարաքիլիսա (այժմ Կիրովական), իսկ մյուս կողմից դեպի Երևան՝ Ջուլֆա գնալու համար։ Վերցնելով Ղարաքիլիսան և Լոռին, թյուրքերն սպառնում էին Թբիլիսիին, Ղազախի վրայով ճանապարհ էին բացում դեպի Ադրբեջան՝ Սովետական Բաքվի վրա արշավելու համար և միաժամանակ իրենց ձեռքն էին զցում հարուստ մի վայր։ Թյուրքական զորքերի շարժումը այդ երկու ուղղությամբ կատում էր Երևանի նահանգի հայությունը արտաքին աշխարհից և, այդպիսով, բացառիկ ծանր դրության մեջ դնում նրան։ Բոլոր տվյալները ասում էին, որ թյուրքերը իրենց սպառնալիքը՝ չապահովել բնակչության խաղաղությունը շարժվող զորքերի կողմից, կամ, ուրիշ խոսքով, կոտորել նրանց, իրականացնելու են։ Իրավացի է պատմարան Լեոն, երբ նկատում է, որ «Կովկասահայերի համար 1918 թ. ամառը նույնքան սարսափելի էր, որքան 1915 թ. ամառը թյուրքահայերի համար։[1] Այլևս փախչելու տեղ չկար։ Այդ հուսահատական օրերին իր բախտին թողնված հայ ժողովուրդը Ղարաքիլիսայի և Սարդարաբադի տակ տեղի ունեցած մարտերում, չնայած անհավասար պայմաններին, հերոսական դիմադրություն ցույց տվեց թյուրքական բանակին։

Ալեքսանդրապոլից շարժվելով դեպի Ղարաքիլիսա, թյուրքերը մայիսի 21-ին առանց դիմադրության գրավում են Համամլու գյուղը։ Գիներալ Նազարբեկյանը Ալեքսանդրապոլը ընկնելուց հետո իր շտաբը տեղափոխել էր Կիրովական, իսկ այժմ տեղափոխում է Դիլիջան։ Համամլուն թյուրքերի ձեռքն ընկնելուց հետո Ղարաքիլիսայի և Փամբակի մյուս գյուղերի բնակչությունը որոշում է դիմադրություն ցույց չտալ թյուրքերին, այլ մի կերպ պահպանել իր ֆիզիկական գոյությունը։ Փամբակի գյուղացիությունը տեսնում էր, որ ինքը միայնակ է մնացել։ Ազգային զորամասերի վրա հույս դնել չէր կարելի։ Գիներալ Նազարբեկյանը Դիլիջանից հուսահատական հեռագիրներ էր ուղարկում Թբիլիսի՝ հայկական ազգային խորհրդին, որ ինքը զորք չունի և կռվել չի կարող։ Մյուս կողմից՝ փամբակեցոց վրա ճնշիչ տպավորություն էր թողնում իրենց մոտ կուտակված գաղթականության դրությունը։ Փախչելով թյուրքերից, այստեղ էին հավաքվել 200 հազարից ավելի փախստական հայեր Արևմտյան Հայաստանից, Ղարսի շրջանից, Ալեքսանդրապոլի և Երևանի գավառներից։ Ականատեսների պատմելով՝ մի հսկա զանգված էր դա, որի հոսանքի ծայրը սկսվում էր Ղալթաղչի կայարանից և հասնում էր մինչև Ղարաքիլիսա, մոտ 40 վերստ տարածության վրա։ Անընդհատ տեղացող անձրևի տակ այդ մաս-

[1] Լեո— Անցյալից, Թիֆլիս, 1925 թ., էջ 400։

սան դանդաղորեն շարժվում էր առաջ, դեպի Սանահին և Դիլիջան, թողնելով ճանապարհին այն ամենը, ինչ կարողացել էր փախչելիս վերցնել իր հետ։

Որոշելով մեկ տեղում, զարաքիլիսեցիք փորձում են հաշտարար պատգամավորություն ուղարկել թյուրքերի մոտ՝ վերջիններիս հետ բանակցելու համար։ Սակայն պատգամավորությունը չի կարողանում հասնել։ Նկարագրած դեպքերից մոտ մեկ ամիս առաջ գաշնակցականները գաղանորեն սրբելաջարդել էին Ղարաքիլիսայի մոտ գտնվող ադրբեջանական Վարդանլու փոքրիկ գյուղը, որի բնակիչների ազատված մասը փախել ու միացել էր առաջ շարժվող թյուրքական բանակին։ Սրանց ազդեցության տակ թյուրքական առաջապահ դիվիզիոնները թույլ չեն տալիս պատգամավորությանը շարունակելու իր ճանապարհը դեպի Համամլու, որտեղ գտնվում էր թյուրքական առաջապահ զորքերի հրամանատարությունը, և պատգամավորությունը սահմանված է լինում վերադառնալ Ղարաքիլիսա։ Պատգամավորության վերադարձը վերին աստիճանի ծանր տպավորություն է թողնում փամբակեցիների վրա։ Կոտորածի վտանգը ոռնալ է դառնում։ Փամբակի երիտասարդությունը զինվելով, քաշվում է Մայմեխի բարձունքները։

Այսպես էր դրությունը Ղարաքիլիսայի շրջանում, երբ մայիսի 24-ին այդտեղ են հասնում հարևան Ղազախի գյուղացիք, թշնամուն դիմադրելու վճռականությամբ լի։ «Ո՞ւր եք գնում,—ասում էին նրանք դեպի Դիլիջան գնացող փախստականներին,—փախչելու տեղ չկա։ Գիտի կռվենք՝ մեր կյանքը, պատիվը, տունը պաշտպանելու համար»։

Ի՞նչպես ծագեց այդ մարտական արամադրությունը։ Մենք արդեն ասացինք, որ ժողովուրդը գիտակցում էր ժամենտի լրջությունը՝ այն ահռելի վտանգը, որ կախված էր իր գլխին։ Նա պատրաստ էր զենքը ձեռքին պաշտպանելու իր գոյությունը։ Բաջալերված և ոգևորված խրախուսական խոսքերից, Ղազախ—Դիլիջանի գյուղացիք, ինչպես գրում է պատմաբան Լեոն, «...լավայի պես դիմում են դեպի Ղարաքիլիսա, նույնիսկ առանց զենքի, ճանապարհին իրենց հետ քշելով տանելով պատահած գյուղերը։ Իսկ հրացաններ և փամփուշտներ նրանք գտնում էին Ղարսի և Ալեքսանդրապոլի փախստականների սայլերում. սրանք, ինչպես ասացի վերևում, լցրել էին Փամբակի ձորը։ Կազմվելով և կազմակերպվելով իբրև զորք՝ սպաների ղեկավարության տակ, այդ բազմությունը մի ճակատամարտ է տալիս օսմանյան բանակին, որը տևում է երեք օր»։[1]

Ղազախ—Դիլիջանի շրջանների գյուղացիների Ղարաքիլիսա հասնելը ոգևորում է փամբակեցիներին, որոնք ապրում էին ահի ու սարսափի օրեր։ Այժմ նրանք միանում են եկածներին և բոլորը հարձակ առաջ են շարժվում ընդդեմ թշնամու։ Ինչպես պատմում են ականատեսները, կռվողների շարքերն էին մտնում ծերունիները և պատանիները։ Ղարաքիլիսայի ճակատամարտում, ինչպես հիմա մենք կտեսնենք, կռվում էր ինքը ժողովուրդը՝ հայ գյուղացին, և ոչ թե խմբապետական ուժերը կամ կազմալուծված ազգային զորամասերը։

Դեպի Արևելյան Հայաստան արշավող թյուրքական բանակը ոչ մի տեղ, սկսած Երզնկայից մինչև Ալեքսանդրապոլ, այնպիսի համառ դիմա-

[1] Լեո—Անցյալից, էջ 399—400։

դրության չհանդիպեց, ինչպես Ղարաքիլիսայի և Սարդարաբադի մոտ։ Թողնելով մի ուրիշ անգամ խոսելու Սարդարաբադի կռվի մասին, դառնանք Ղարաքիլիսայի մարտին։

«Հայերի՝ թյուրքական զորքերի դեմ մղած պայքարի մեջ—կարդում ենք ականատեսի մի թղթակցությունում այդ կռվի մասնակիցների ու նրանց ցուցաբերած հերոսության մասին,—Ղարաքիլիսայի կռիվը բռնում է բացառիկ տեղ իր խիզախությամբ և հերոսական ոգով։

Հայ-թյուրքական կռիվների միջոցին ոչ մի տեղ հայկական զորքերը այնպիսի խիզախ, անձնուրաց դիմադրություն չցուցաբերեցին, ինչպես այդ արին Ղարաքիլիսայի մոտ հայ գյուղացիները, այդ լեռնական երկրագործ և հովիվ մարդիկ։

Ականատեսների վկայությամբ, գրանց անվարժ, անհավասար քայլող խմբերը գնում էին իրենց պատիվը, տունը, ընտանիքը պաշտպանելու և մեռնելու պարզ գիտակցությամբ։

Գնում էին երգելով, ուռայով»։[1]

Նույն ճակատամարտի, նրա մասնակիցների և նրանց կողմից ցուցաբերած քաջության մասին մի ուրիշ ականատես պատմում է.

«Ղարաքիլիսայի և նրա շրջակա գյուղացիները իմանալով, որ օսմանցիները Հաժաղուբից կամենում են գրոհ տալ դեպի Ղարաքիլիսա, բոլորը մի մարդու նման ոտքի են կանգնում և որոշում են մեռնել և անձնատուր չլինել։

Փոքրաթիվ հայ զինվորները՝ միացած տեղացիների հետ, ամեն միջոց ձեռք են առնում թշնամու առաջը կտրելու։ Զորամասերի մեջ են մտնում նույնիսկ ծեր, հասակավոր մարդիկ և պատանիները... Արշուտ կիսակայարանի մոտ սկսվում է կռվերի ընդհարումը։ Մեր զորամասերը, մեր գյուղացիները կռվի մեջ են նետվում անվախ, համարձակ»։[2]

Այստեղ խոսվում է նաև «փոքրաթիվ հայ զինվորների» մասին։ Ընդհանուր ոգևորության մթնոլորտում գյուղացիներին միանում են իրոք փոքրաթիվ հայ զինվորներ ազգային զորամասերից։ Բայց, ինչպես ասացինք, այդ մարտում կռվում էր հայ գյուղացին։

Կռվի մի մասնակից նույն հարցերի մասին գրում է.

«Ղարաքիլիսայի և Ղազախի հայ գյուղերում լուր տարածվեց, թե թյուրքերը առաջ են շարժվում և ուզում են Ղարաքիլիսան գրավել։ Բոլորը մի մարդու նման ոտքի կանգնեցին—18 տարեկանից սկսած մինչև 55 տարեկանը, իրանց զենքով, փամփուշտներով և պաշարով։

«Ղազախի շրջանի գյուղերից բոլորը հավաքվեցին Դիլիջան, որտեղ կայացավ զորահանդես...»։ Այնուհետև հավաքվածները

«...Գանգնավոր շարքերով առաջ շարժվեցին Ղարաքիլիսա, որի ընակչության մի մասը դաղթում էր դեպի Դիլիջան։

Ճանապարհին սարերից շարան-շարան, քրտնաթոր իջնում էին հովիվները և միախառնվելով մեկ հետ՝ նախատում էին իրենց հաժաղուբցիներին, որ ժամանակին իրենց ևս չեն հայտնել և այդ պատճառով շատերը տավարը դաշտերում են թողել և մահակը վերցնելով՝ շապել մեզ հասնելու։

[1] «Մշակ», № 108, 9 հունիսի 1918 թ.։
[2] «Մշակ», № 106, 5 հունիսի 1918 թ.։

Երեկոյան հասանք Ղարաքիլիսայի բարձունքները, ապա շրթա կապած հասանք Արջուտ կայարանը, որտեղ էին և այդ շրջանի գյուղերի հայերը։

Մեր զորքը 5—6 հազար հոգով լիներ։ Առաջին օրը թնդանոթներ չունեինք, կռվում էինք հրացաններով և գնդացիրներով, որոնց թիվը կլիներ մոտավորապես քսան հատ։

Երկրորդ օրը մեզ հասան թնդանոթաձիգները և սկսեցին գործել։ Առաջին հարձակումը եղավ մեր կողմից և վերջացավ մեզ համար լավագույն աջողությամբ, իսկ թշնամու պարտությամբ, որը և դիմեց անկարգ փախուստի. այդ օրը վերցրինք երկու թնդանոթ և 5 գնդացիր, ապա առաջ շարժվելով գրավեցինք Համամլուի բարձունքները։

Մյուս օրը թշնամին մեզանից շատ գերազանց ուժերով դիմեց հարձակվան, բայց մեր համառ դիմադրությունը կանգնեցրեց նրա գրոհը, և մենք դիմեցինք հակահարձակվան, որտեղ և սպանվեց թնդանոթաձիգ խմբի ղեկավար Մովսիսյանը։ Մեր հարձակումը թշնամուն այնպիսի մի հարված հասցրեց, որ, գերիների պատմելով, թյուրքաց հրամանատարությունը ահ ու սարսափի մեջ շաբաթակ թարմ ուժեր է պահանջելիս եղել Ղարսի շրջանից։ Նրանք այնպես են կարծել, թե բոլորովին նոր զորք է կռվում իրանց դեմ, նույնիսկ կասկածել-են, թե անգլիական զորք է Զուլֆայով եկել միացել հայերին։

Երեք վերստ տարածությունից, երբ մերոնք «ուռա» գոչելով գրոհ էին տալիս, թշնամին այնպիսի սարսափահար փախուստի էր դիմում, որ ոմանք մոլորված դեպի մեզ էին փախչում՝ կարծես թե նախկին հղփացած թյուրքական զորքը չլիներ՝ Ալլահի ուղարկած «հաղթությունների»։

Կռիվը երկուսուկես կատաղի էր. ամբողջ չորս օր, մինչև ուշ գիշեր չէին դադարում թնդանոթների գոռգոռոցները։

Թշնամին գերազանց էր մեզանից թե ուժով և թե ռազմամթերքով։ Մեր մի թնդանոթին նրանք չորսով էին պատասխանում, կռվում էին խիզախորեն, խիտ շարքերով առաջ էին շարժվում, մեր կրակի տարափի տակ գետին էին փռվում, բայց նրանք սունկի նման հաջորդում էին մեկը մյուսի հետևից և այդպիսով առաջանում. նրանց կորուստները, գերիների պատմելով, մի քանի հազար են, վիրավորները նույնպես։

Չորս օր կռվելուց հետո առանց կողմնակի ուժ ստանալու՝ ռազմամթերքի կատարյալ սպառման պատճառով բռնեցինք նահանջի ճամբան, որը պակաս թանգ չնստեց մեզ»[1]։

Իր պատմածում մարտի մասնակիցը նրա տևողությունը համարում է չորս օր—մայիսի 25-ից մինչև 28-ը։ Մի քանի ուրիշ աղբյուրներ ևս չորս օր են համարում։ Սակայն ճիշտ կլիներ համարել երեք օր՝ մայիսի 26-ից մինչև 28-ը։ 25-ի կռվում, Դշլաղ գյուղի մոտ, որի բնակչությունը, ի դեպ ասած, պատանուց սկսած մինչև հասակավորը մասնակցում էր կռվին, հայերի ուժերը դեռ ամբողջովին չէին կենտրոնացված, չունեին և հրետանի։ Կռիվը ինչպես պետք է ծավալվում է հաջորդ օրը՝ մայիսի 26-ին։ Այդ օրը առավոտից հայերը անցնում են հարձակվան և չնայած տեղի դժվարության, թևանցում են թյուրքերի աջ թևը Մայմեխ լեռան վրայով և երեկոյան դեմ, համառ կռվից հետո, հակառակորդին ետ են շպրտում հա-

[1] «Մշակ», № 106, 7 հունիսի 1918 թ.։

ջիղարայից և այդ գյուղից դեպի արևելք ընկած լեռնադագաթներից։ Հայերը գրոհի են դիմում և կենտրոնից ու ստիպում թշնամուն նահանջել։ Մայիսի 27-ին թյուրքերն անցնում են հակահարձակման։ Հայերը ցույց են տալիս հերոսական դիմադրություն։ Թյուրքերն սկսում են թևանցել հայերի ձախ թևը և վերագրավում են Մայմեխը։ Այդ թևում հայերը ստիպված են լինում թողնել Բղովդալը և նահանջել Ղշլաղ։ Մայիսի 28-ին թյուրքերին հաջողվում է խոր թևանցում կատարել հայերի ձախ թևից և նրանց թիկունքը դուրս գալ Վարդանլու գյուղի մոտ։ Հայերը ստիպված են լինում մայիսի 28-ի երեկոյան թողնել Ղարաքիլիսան։ Այդ օրը վերջանում է և նրանց ռազմամթերքը։ Թյուրքական զորամասերը հետապնդելով նահանջող հայերին, գրավում են բոլոր կայարանները և հասնում Շուլավեր։

Թյուրքական զորքերի հրամանատար Վեհիբ-փաշան, բաթումում խոսելով Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին, հայտարարեց. «Ղարաքիլիսայի ճակատամարտը—դա՝ հաղթագյուտ կռիվ էր այս ժարտերի պատմության մեջ»[1]։ Նույնի հայտարարության համաձայն, Ղարաքիլիսայի տակ... շտապ կերպով հավաքված և նույնիսկ դումարտակների ու գնդերի չմիաբերված 7000 հայերի դեմ, որոնք ունեին 10 թնդանոթ և 20 գնդացիր, թյուրքերն ունեին 10.000 ընտիր զորք, 70 թնդանոթ և 40 գնդացիր։ Եվ չնայած դրան՝ վերջնական հաղողությունը թյուրքերը ձեռք բերին խոշոր զոհերի գնով»։[2]

Թյուրքական հրամանատարի տվյալները հայ կռվողների թնդանոթների և գնդացիրների թվի մասին ժոտավորապես ճիշտ պիտի համարել։ Մեր բերած աղբյուրներից մեկում կռվի մասնակիցներից մեկը հայերի թիվը հաշվում է 5—6 հազար, իսկ գնդացիրներինը՝ քսան հատ։

Գովելով հայ գյուղացիների ցուցաբերած քաջությունը Ղարաքիլիսայի կռվում, թյուրք հրամանատարությունը միաժամանակ չի ժոռանում ի կատար ածել իր սպառնալիքը՝ չապահովել այդ գյուղացիների անդորրությունը դիմադրության դեպքում։ Փամբակի գյուղերը ենթարկվեցին կոտորածի և թալանի։ Մայիսի 28-ին, երբ պարզվել էր հայերի պարտությունը, բայց դեռ շարունակվում էր կռիվը, դարաքիլիսեցիք մի պատգամավորություն են ուղարկում թյուրքական հրամանատարության ժոտ՝ խնդրելու հովանավորել ժողովրդին, թույլ չտալ, որ տեղի ունենա կոտորած և թալան։ Պատգամավորության հետ է լինում և գերմանական մի լեյտենանտ։ Մենք ենթադրում ենք, որ այդ գերմանական սպան Լոսովի ուղարկած սպաներից պիտի լիներ։ Պատգամավորությունը թյուրքական 11-րդ դիվիզիայի հրամանատար Ջավիդ-բեյի հետ հանդիպում է ունենում Արջուտ կիսակայարանում։ Ջավիդ-բեյը լսելով պատվիրակների խնդիրը՝ գերմանական սպայի ներկայությամբ խոսք է տալիս ձեռք առնել բոլոր միջոցները, որ կոտորած և թալան տեղի չունենան, որ Ղարաքիլիսայում նորմալ կյանքը վերականգնվի, և պատրաստակամություն է հայտնում ամեն տեսակի աջակցություն ցույց տալ Փամբակի ձորում կուտակված գաղթականության։ Բայց դրանք լոկ խոսքեր էին, ժողովրդին հանգստացնելու

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական Արխիվ, ֆոնդ, 68/200, գործ 11, թերթ 63

[2] "Кавказское Слово" № 119 от 12 июня 1918 г.

համար։ Օկուպանտները սրի ժատնեցին բնակչությանը և հիմնովին թալանեցին թե պետական և թե ժողովրդի տնտեսությունը։

1918 թ. վերջերին Թբիլիսում մի հատուկ բյուրո էր կազմակերպված, որն իր առջև խնդիր էր դրել պարզել հայերի կրած թե ժարդկային և թե տնտեսական վնասները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Այդ բյուրոյին գլուխ էր անցել հայ անվանի բանաստեղծ Հովհ. Թումանյանը։ Բյուրոյի նյութերում կան փաստաթղթեր, որոնք լուսաբանում են Ղարաքիլիսայում և Փամբակի ժյուս գյուղերում պատահած դեպքերը Ղարաքիլիսայի կռվից հետո։ Փաստաթղթերից մեկում կարդում ենք.

«Թյուրքական զորքը ներս է խուժել Փամբակի շրջանը 1918 թ. մայիսի 10-ին։ Այդ զորքը Ջավիդ-բեյի 11-րդ դիվիզիան էր... Որ թե այս և թե հետո եկած զորամասերի կատարած սպանությունները, բռնությունները չեն կրել տարերային բնույթ, չեն եղել զինվորների սանձարձակությյան հետևանք, այլ նրանք արդյունք են թյուրքվարիչների կանխորոշած ծրագրի՝ սա կասկածից դուրս է։ Պարզ է միանգամայն, որ հրահանգված թյուրք հրամանատարությունը նպատակ է ունեցել ուժասպառել իրենց բարեկամ չհամարվող հայ ազգաբնակությունը՝ թե ֆիզիկապես և թե տընտեսապես... Կոտորածները բնավ անկարգ, պատահական բնույթ չեն կրել, այլ եղել են ծրագրված և կազմակերպված և տևել են պաշտոնապես երեք օր։ Ղարաքիլիսայում թե բռնությամբ և թե զանազան խորամանկ միջոցներով հարյուրավոր ժարդկանցից բաղկացած խմբեր են հավաքել և գյուղից դուրս հանելով գնդակահարել կամ սվինահարել են։ Ղարաքիլիսայում սպանվել են բոլոր հայ սպաներն ու զինվորները, որոնք պարտությունից հետո կամ գերի են ընկել, կամ կամովին ապավինել են հաղթողի մեծահոգությանը։ Այս վերջինները ժիամտություն են ունեցել կարծելու, որ իրենք կհամարվեն զինվորական գերիներ, և դուրս են եկել իրենց թաքստի տեղերից և ներկայացել թյուրք կոմենդանտին։ Նույն տեղում կոտորված են, բացի տեղացիներից, բազմաթիվ գաղթականներ Ղարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից։ Ընդհանուր առմամբ Ղարաքիլիսայի շրջակայքում գընդակահարված են մի քանի հազար ժարդ. քանի՞—ճիշտ թիվը պարզելու հնարավորություն չկա։ Պետք է կարծել, որ այդ թիվը 3000-ից պակաս չէ, թեև ոմանք հաստնում են մինչև 7000-ի։ Այս թվի մեջ չեն մտնում սպանված տեղացիները՝ թվով 1470 հոգի...

Այս ձևի կոտորածներ տեղի են ունեցել նաև Հաժամլուում, Հաշիզարայում, Դարբազում, Ղշլաղում և Եղարլուում... Արևմտյան Փամբակի գյուղերից գերի են տարել հարյուրավոր երիտասարդների, որոնք գրեթե բոլորը ոչնչացել են քաղցից, ծեծից և ուժից վեր աշխատանքներից, Էրզրումի շրջանում։ Սակավաթիվ վերադարձողները պատմում են, որ նրանց, բացի այլև այլ տաժանակիր աշխատանքներից, նաև լծում էին սայլերին և քշում երկաթե ճիպոտներով։ Էրզրումում եղած 8000 գերուց—Շիրակից և Փամբակից—վերադարձել են միայն 600 հոգի։ Այս թվերը շատ պարզ են խոսում։

Թե մեր (Փամբակի։ Հ. Է.) շրջանում և թե ամենուրեք առանձնապես հետամտել են տաճկահայերին և ճանկ ընկածներից ոչ մեկը չի խուսափել մահից։

Ինչ որ տվեց Փամբակի մասին, նույնը կարելի է կրկնել Լոռու մասին փոքրացրած մասշտաբով»[1]:

Ղարաքիլիսայի ճակատամարտը չխանգարեց Թշնամու առաջխաղացմանը և նրա պլանների կիրառմանը Անդրկովկասում: Հակառակորդը ուժեղ էր թե քանակով և թե սպառազինությամբ: Այդ ճակատամարտը պիտի դիտել որպես ինքնապաշտպանության մի հերոսական կռիվ, որը տվեց իր ճակատագրին թողնված ժողովուրդը, զգալով իրեն սպառնացող անհայի վտանգը:

A II 333559

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

[1] Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ. Ֆոնդ. 70/202, գործ № 1271, թերթ 47.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220033359

(204)

A II 33359